ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/06

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 17.01.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն 17.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների մատուցման ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որի 27.12.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Աճուրդի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշյալ հարցման՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (27.12.2018թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 21.000 (քսանմեկ հազար) ՀՀ դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի կողմից 15.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով մերժվել է, այն հիմքով, որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորության չափը գերազանցում է այդ չափաբաժինների մասով «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

Գնահատող հանձնաժողովը 15.01.2019թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն: Նշվածի հետ կապված Ընկերությանը առաջարկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունը:

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից 16.01.2019թ. գնահատող հանձնաժողովին առձեռն ներկայացվել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկանք, ըստ որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրը չունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն: 27.12.2018թ. դրությամբ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն ունի 1.383.947 (մեկ միլիոն երեք հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամի չափով գերավճար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ 4-րդ և 5-րդ կետերով սահմանված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության

համաձայն՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն 27.12.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 21.000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում ենք, որ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարման գծով:

Նախ, պետք է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. Հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարը նույնպես նախատեսված չէ:

Սակայն, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների մատուցման ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում բացահայտվել է, որ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից):

Պետք է նշել, որ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշային վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի

քարտի» տվյալները, ըստ որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. Ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Գտնում ենք, որ նման դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ դրոշմանիշային վճարի գծով առաջացած 21.000 ՀՀ դրամ պարտավորությունը Ընկերության կողմից մարվել է 16.01.2019թ.:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Գնումների հետ կապված բողոքը քննող անձ Է. Սարգսյանի 08.10.2018 կայացրած թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/98 և 02.11.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/104 որոշումներով նույն հիմնավորմամբ բավարարվել են ներկայացված բողոքները և որոշում են կայացվել դադարեցնել բողոքաբեր ընկերությունների հայտերը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումները՝ ժամկետանց պարտավորությունները դրոշմանիշային վճարների գծով առկա լինելու հիմքով, քանի որ ըստ բողոքը քննող անձի՝ առկա է Ընկերությունների իրազեկված չլինելու հանգամանքը, ինչի ուժով հայտը պետք է գնահատվի բավարար:»:

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

Դադարեցնել ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 15.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Սյուզաննա Եղիազարյանը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը 17.01.2019թ. գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով

սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ Բաբկեն Արամյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 17.01.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր) ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 09.01.2019թ. ժամը 14:30-ին կայացած նիստի թիվ 2 և 15.01.2019թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, 27.12.2018թ. դրությամբ Ընկերության՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 16.01.2019թ. «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին տրված թիվ 34 տեղեկանքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.01.2019թ. տրված եզրակացությունը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ անվտանգության և պահանորդական ծառայությունների մատուցման ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, (այսուհետ նաև՝ Աճուրդ) որին մասնակցության հայտ է ներկայացրել «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը 1-ին չափաբաժնի մասով կազմել է՝ 1.930.000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի մասով՝ 2.900.000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի մասով՝ 1.180.000 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի մասով՝ 900.000 ՀՀ դրամ:

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված

ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 09.01.2019թ. ժամը 14:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 4.1 կետով որոշել է Աճուրդի առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին:

- 6.1 կետով որոշել է հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասկնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.01.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 21.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 15.01.2019թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

- 1.1 կետով արձանագրել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած եզրացության համաձայն՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է Աճուրդի 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

- 1.2 կետով հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը, որոշել է «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Աճուրդի 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով մերժել:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.01.2019թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (27.12.2018թ.) ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 21.000 ՀՀ դրամ գումարի չափով: Ընկերության ներկայացուցիչը

հայտնեց նաև, որ արձանագրված ժամկետանց պարտավորությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 16.01.2019թ. «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին տրված թիվ 34 տեղեկանքի համաձայն, գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ հայտը ներակայացնելու օրվա (27.12.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, հետևաբար հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները և վստահ լինելով, որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորություններ չունի, մասնակցության հայտ է ներկայացրել:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 27.12.2018թ. դրությամբ քաղվածքը, որի համաձայն՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 16.01.2019թ. «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին տրված թիվ 34 տեղեկանքը, որի համաձայն արձանագրված պարտավորությունը դրոշմանիշային վճարների գծով է:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ անվտանգության և պահանորդական ծառայությունների մատուցման ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/25 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.10 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ babken.aramyan@yerevan.am հասցեով գործող էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի էլեկտրոնային փոստի հասցեն Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե)

հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 4-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.11 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.10 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.01.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի Աճուրդին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (27.12.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 21.000 ՀՀ դրամ:

- «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ հայտը ներակայացնելու օրվա (27.12.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (27.12.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

1. «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի կողմից 17.01.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 15.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ